



Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՏՈՒԹ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅԻ ԵԿԵՂԵՑԻ

the very rev. Zaven Arzoumanian, pastor

Մարտ 13, 1984

Գերաշնորհ

Տ. Թողքոմ Արքեպս. Մանուկեան
Առաջնորդ Հայց. Եկեղեցւոյ Հիւս. Ամերիկայի

Նիւ Եռք

Գերաշնորհ Սրբազն Հայր,

Հաճոյքով կը տեղեկացնեմ թէ տարւոյս Փետրուար 26ին գումարեցինք համայնքիս տարեկան Ծխական ժողովը մեր նախագահութեամբ։ 1983 տարուայ 449 տրատու անդամներէն ներկայ էին 89 անձեր։ Ատենապետութիւնը վարեց Պր. ճորճ Տէվլէթեան եւ ատենապիրի պաշտօնը վարեց Տիկ։ Սոնիա Յակոբեան։ Հաճեցէք տեսնել ներփակ ատենագրութիւնն ու յարակից բոլոր տեղեկագիրները, ինչպէս նաև Առաջնորդարանիդ հարցարանն ու տեղեկագիրը։ Ըստը ու եցան նոր թեմական Պատգամաւորներ եւս, որոնց վկայականները կը գտնէք ներփակ, իսկ հասցները կը գտնէք Առաջնորդարանին յատուկ տեղեկագրի 19րդ էջին վրայ։

Ծխական Խորհուրդի դադարեալ 7 անդամոց տեղ ընտրուեցան։

Մելինէ Սարրաֆեան	71	Արամ Ֆայտա	52
Մայքըլ Մալեան	64	Նուպար Մարգարիտեան	52
Վահէ Սողոմոնեան	61	Դաւիթ Ահագինեան	51
Պրուս Պալթաեան	60	Գլուտիթ Սարեան (Փոխ.)	50

Վերջին անունը որպէս անձնափոխանորդ յիշեցի որովհետեւ ստիպուած պիտի ըլլայ հրաւիրուիլ նախկիններուն մէկուն Պր. Գարլ Պօյաճեանի Վրճինիա փոխադրութեան հետեւանքով ստեղծուելիք բացը գոցելու։ Հաճեցէք ուրեմն հաստատել ընտրութիւնը վերոյիշեալ եօթնին։ Պատգամաւոր ընտրուեցան հետեւեալ ները։

Ճորճ Տէվլէթեան	67	Նուպար Մարգարիտեան	44
Նինա Բախդիկեան	57	Լուի Գարակիւլեան	41

Ներփակ կը գտնէք հարկ եղած տեղեկագրերն ու նամակները, ինդը եմ փութացուցէք Զեր պատասխան-հաստատագիրը։ Շնորհակալութիւն եւ լաւագոյն մաղթանքներ։

Սիրով աղօթակից
Զաւէն Ս. Կ. Արզումանեան, Հովհաննես

st. sahag and st. mesrob armenian church
630 clothier road wynnewood, pa. 19096 215-642-4212